

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԲԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՈՒՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ
ՈՐ Ի ՇԱՀՈՒՄԵԱՆ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւարաւոր զաւակիդ:

Յարգարժան պրն. Վարդանեան,

Անկեղծ գոհունակութիւն է Մեզ համար Արարապեան Հայրապետական Թեմի Առաջնորդական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ Արքեպիսկոպոս Կոնյեանից բարի վկայութիւններ լսել հաւարաւոր հայորդոյ ազգօգոյր ու եկեղեցանպաստ արգասաւոր գործունէութեան մասին: Աստուածասէր մեր ժողովրդին ծառայելու, հայորդեաց ազգային եւ եկեղեցական կեանքի շինութեանն ու պայծառութեանը աւանդ բերելու ազնիւ նուիրումով Դուք յանձն առաք Արարապի մարզի Շահումեան գիւղի Սուրբ Աստուածածին եկեղեցու վերանորոգման, հովուարան ու մաքաղարան կառուցման եւ փարածքի բարեկարգման հովանաւորութիւնը՝ յանձնաճակնելով Ձեր անունը որպէս եկեղեցու բարերար: Գոհաբանական աղօթքն է Մեր հոգում, որ մեր ժողովրդի զաւակները «գրոյ յիշարակի արժանի» գործերով աջակից են մեր Սուրբ Եկեղեցուն՝ շարունակելու բազմադարեայ առաքելութիւնը յանուն հայ ինքնութեան անխաթար պահպանման, հոգեւոր ու ազգային մեր կեանքի պայծառութեան, նախնեաց աւանդների հանդէպ հաւարարմութեան զօրացման:

Մեր ժողովրդին ու մեր Սուրբ Եկեղեցուն բերած Ձեր ազնիւ ծառայութիւնների բարձր գնահատանքով, սիրով ընդառաջ Գերաշնորհ Տ. Նավասարդ Արքեպիսկոպոս Կոնյեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

պապոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրբի աղօթքով հայցում ենք, որ Բարձրեայ Տերն Իր հանապազ օրհնութեան ներքոյ միշտ բաջառողջ ու երջանիկ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ առաջնորդելով եկեղեցաշէն ու հայրենանուէր նորանոր իրագործումների:

Թող Ձեր յարկը շնորհընկալը լինի Աստուածաբարգև եւ բիւր բարիքների եւ երկնային առաք ողորմութեան:

Նաստրաստոնն եղերութ, անշա՛րժ կացեք, առան՛լ լերութ ի գործ Տեստն յամենայն ժամ. գիտասցի՛ք՝ զի վաստակքն ձեր ո՛չ են ընդունայն առաջի Տեստն (Ա Կորնթ. ԺԵ 58):

Օրինութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

Տուաւ Կոնդակս ի 25-ն Մարտի
յամի Տեստն 2009 եւ ի թուին հայոց ՌՆԾԸ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 512